



**ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ ԱՄՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

**ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***Ի՞նչ բնույթի ընտրություններ են լինում***

Կան ընտրությունների երեք հիմնական տեսակներ՝ առաջնային կամ նախնական, ընդհանուր և տեղական: Բացի այդ, կարող են անցկացվել «հատուկ ընտրություններ», որոնք սովորաբար ունենում են մեկ որոշակի նպատակ, ինչպես, օրինակ, թափուր տեղի համալրումը:

***Ո՞րն է առաջնային կամ նախնական ընտրությունը***

Առաջնային կամ նախնական ընտրությունը կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուի ընտրությունն է: Առաջնային կամ նախնական ընտրությունը կարող է լինել բաց կամ փակ: Եթե այն փակ է, ապա մասնակցում են միայն տվյալ կուսակցության անդամները, իսկ եթե բաց է, ապա կարող են մասնակցել ընտրական իրավունք ունեցող բոլոր մարդիկ՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

***Ո՞րն է ընդհանուր ընտրությունը***

Ընդհանուր ընտրություններն անցկացվում են առաջնային կամ նախնական ընտրությունների (կամ համագումարների ու խմբակցությունների նախընտրական ժողովների) ժամանակ առաջադրված թեկնածուներից ֆեդերալ, նահանգային կամ տեղական ընտրովի պաշտոնյաներին ընտրելու համար: Ընդհանուր ընտրությունների նպատակը կուսակցությունների կողմից առաջադրված կամ անկախ թեկնածուներից կամ էլ քվեաթերթիկում չգրանցված թեկնածուներից վերջնական ընտրության կատարումն է: Բացի այդ, այն դեպքերում, երբ ոչ կուսակցական թեկնածուների որոշումը առաջնային կամ նախնական ընտրությունների ժամանակ հնարավոր չի լինում, ապա առավել ձայներ հավաքած երկու թեկնածուների կրկնական ընտրությունը կատարվում է ընդհանուր ընտրությունների ընթացքում:

***Ե՞րբ են անցկացվում ընդհանուր ընտրությունները***

Ընտրությունների օրը գույգ տարեթվերի նոյեմբեր ամսվա առաջին երկուշաբթի օրվան հաջորդող առաջին երեքշաբթին է:

## ***Ո՞վ կարող է առաջադրվել որպես թեկնածու***

Տարբեր ընտրովի պաշտոնների համար թեկնածուներին առաջադրվում են տարբեր պահանջներ.

ԱՄՆ նախագահի թեկնածու կարող են առաջադրվել

- 35 տարին լրացած
- Միացյալ Նահանգներում ծնված ԱՄՆ քաղաքացիները, որոնք առնվազն 14 տարի բնակվել են Միացյալ Նահանգներում:

ԱՄՆ սենատի անդամության թեկնածուներն ըստ ԱՄՆ սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պետք է լինեն.

- Առնվազն 30 տարեկան,
- 9 տարվա ամերիկյան քաղաքացի և այն նահանգի մշտական բնակիչ, որտեղից ընտրվելու են:

ԱՄՆ ներկայացուցիչների պալատի անդամության թեկնածուներն ըստ ԱՄՆ սահմանադրության 1-ին հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի պետք է լինեն.

- առնվազն 25 տարեկան,
- 7 տարվա ամերիկյան քաղաքացի և այն նահանգի մշտական բնակիչ, որտեղից ընտրվելու են:

Նահանգային և տեղական ընտրովի պաշտոններին առաջադրվող պահանջներն սահմանվում են ըստ նահանգային կամ տեղական օրենքների:

## ***Ինչո՞ւ են ֆեդերալ ընտրություններն անցկացվում նոյեմբեր ամսվա 1 երկուշաբթի օրվան հաջորդող երեքշաբթի օրը***

Նոյեմբեր ամսվա առաջին երկուշաբթի օրվան հաջորդող երեքշաբթին ֆեդերալ օրենսդրությամբ սկսվել է կիրառվել 1845 թ-ից յուրաքանչյուր 4 տարին մեկ նախագահին ընտրող կոլեգիայի անդամների նշանակման համար: 1875 թ. օրենսդիրները որոշեցին, որ գույգ տարեթվերին այս օրը կատարվելու է ներկայացուցիչների պալատի անդամների ընտրությունը: 1914 թ. այս օրը դարձավ նաև ամերիկյան սենատի անդամների ընտրության օր:

## ***Ինչո՞ւ նոյեմբերի սկզբին***

Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմության մեջ նշանակալի տեղ է զբաղեցրել հողագործությունը, ուստի օրենսդիրները հաշվի առնելով, որ նոյեմբերը հողագործների ու գյուղաբնակների համար թերևս ամենահարմար ժամանակն է, որպեսզի նրանք անցնեն դեպի ընտրական տեղամաս տանող երկար ճանապարհը

(գարունը ցանքի ժամանակաշրջան է, իսկ ամառը դաշտային աշխատանքների եռուն շրջանը): Բացի այդ, նոյեմբերին եղանակը դեռ բավականին մեղմ էր, և անբարեկարգ ճանապարհներով անցնելը լուրջ դժվարությունների հետ կապված չէր:

### *Ինչո՞ւ երկուշաբթի օրը*

Քանի որ ԱՄՆ գյուղատնտեսական շրջաններում բնակվող մարդկանց մեծ մասը պետք է իսկապես երկար ճանապարհ կտրեն օկրուգային ընտրատեղամաս հասնելու և այնտեղ քվեարկելու համար, ուստի երկուշաբթին հարմար չէր, քանի որ ոմանք ստիպված պետք է լինեին տնից դուրս գալ կիրակի օրը, իսկ դա թույլ չէր տա, որ նրանք ներկա գտնվեին կիրակնօրյա պատարագին:

### *Ինչո՞ւ առաջին երկուշաբթի օրվան հաջորդող երեքշաբթի օրը*

Օրենսդիրներն ուզում էին այնպես անել, որ նոյեմբերի 1-ը չլիներ ընտրությունների օրը: Դա պայմանավորված էր հետևյալ 2 գործոններով. առաջին՝ նոյեմբերի մեկին կաթոլիկները նշում են բոլոր սրբերի տոներ, և երկրորդ՝ վաճառականների մեծ մասը յուրաքանչյուր ամսվա մեկին հաշվարկում և ամփոփում էին նախորդ ամսվա իրենց գործարքները: Կոնգրեսն ակնհայտորեն անհանգստացած էր այն հանգամանքով, որ նախորդ ամսվա տնտեսական հաջողություններն ու անհաջողությունները կարող էին անհարկի կերպով ազդել քվեարկության արդյունքների վրա:

### *Ինչո՞ւ Միացյալ Նահանգներում ընտրողների ակտիվությունը մեծ չէ*

Ընտրողների ակտիվությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Բազմաթիվ դիտորդներ կարծում են, որ ընտրողների ակտիվությանը խոչընդոտող հիմնական գործոնը ընտրողների գրանցման գործող օրենքն է: Ընտրագանգվածի ժողովրդագրական կառուցվածքը, երկարատև քաղաքական և տնտեսական կայունությունը, բազմաթիվ ընտրարշավների կանխատեսելի արդյունքները և մի շարք թեկնածուների ոչ գրավիչ լինելու հանգամանքը նույնպես գործոններ են, որոնք անդրադառնում են ընտրողների ակտիվության վրա: Ընդհանուր ընտրությունների ժամանակ ընտրողներն ավելի ակտիվ են, քան առաջնային կամ նախնական ընտրությունների ժամանակ: Ճիշտն ասած, պարտադիր մասնակցություն ընտրություններին ԱՄՆ օրենսդրությամբ երբևէ չի առաջ քաշվել, և ընտրական ձայնը դիտարկվել է ավելի շուտ որպես իրավունք կամ արտոնություն, և ոչ թե պարտականություն: Դա իր հիմնավորումն է գտել ԱՄՆ սահմանադրության մեջ, որով սահմանվում է, որ յուրաքանչյուր նահանգ ստեղծում է «ընտրողների» կոլեգիալ խումբ, որի անդամները նահանգում ունեն մեկ եզակի նպատակ, այն է նախագահի ընտրությունը (Տես՝ ԱՄՆ սահմանադրություն, հոդված 2, կետ 1): Չնայած հիմա ընտրական իրավունք ունեն 18 տարեկան և դրանից բարձր տարիք ունեցող բոլոր անձինք, հանրապետության ժամանակաշրջանում այդ իրավունքն ունեին միայն այն

չափահաս տղամարդիկ, որոնք հանդիսանում էին գույքի սեփականատեր կամ էլ հարկատու:



## *ԸՆՏՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ*

### ***Կարո՞ղ եք պարզաբանել մեծամասնական քվեների և ընտրական կոլեգիայի քվեների միջև եղած տարբերությունը***

Ընտրական կոլեգիայի համակարգով յուրաքանչյուր նահանգ ստանում է այնքան ձայնի իրավունք, որքան կոնգրեսի անդամ ունի: Կոլումբիայի օկրուգը ևս ստանում է երեք ձայնի իրավունք: Ընդհանուր ձայների թիվը 583 է, և ընտրվում է այն թեկնածուն, որը հավաքում է 270 ձայն և ավել: Երկու նահանգներից բացի, մնացած բոլոր նահանգներում մեծամասնական քվեարկությամբ առավել ձայներ հավաքած թեկնածուն ստանում է այդ նահանգի բոլոր ձայները: Նահանգների մեծ մասում կոլեգիալ ընտրողներին որոշում են նահանգային և օկրուգային կուսակցական համագումարները: Հաղթող թեկնածուի կուսակցության կոլեգիալ ընտրողներն իրավունք են ստանում քվեարկել Ընտրական կոլեգիայում: Կոլեգիալ ընտրողները սովորաբար նահանգի մայրաքաղաքում հավաքվում են դեկտեմբերին և քվեարկում: Այս նրանց քվեարկության արդյունքներն ուղարկվում են Վաշինգտոն և ամփոփվում՝ նախքան հունվարին կայանալիք կոնգրեսի համատեղ նիստը: Կոնգրեսում ընդունվել է օրենք, որը թույլ է տալիս որոշ դեպքերում Ընտրական կոլեգիայի քվեարկության արդյունքները չընդունել և առաջնորդվել մեծամասնական քվեարկության արդյունքներով, սակայն Կոնգրեսը սովորաբար այդքան հեռու չի գնում:

### ***Ունեցել է արդյո՞ք Միացյալ Նահանգները նախագահներ, որոնք ընտրվել են առանց ձայների մեծամասնությունը ստանալու***

Եղել են 17 նախագահական ընտրություններ, որոնց ժամանակ մեծամասնական քվեների արդյունքով պարտված թեկնածուն դարձել է նախագահ: Առաջինը Ջոն Բուինսի Ադամսն էր 1824թ., իսկ վերջինը Ջորջ Վ. Բուշը 2000թ. ընտրությունների ժամանակ: Ընտրական կոլեգիայի համակարգով նախատեսվում է, որ տվյալ նահանգում քվեարկության արդյունքներով ձայների մեծամասնություն ստացած թեկնածուն (անկախ այն հանգամանքից, թե թեկնածուների քվեները ինչ համամասնությամբ են բաշխվում) ստանում է այդ նահանգի բոլոր ձայները: Այսպիսով, հնարավոր է, որ նախագահ ընտրվի այն թեկնածուն, որը ստացել է մեծամասնական քվեների ավելի քիչ մասը, քան ընդդիմադիր թեկնածուն: Այսպես են նախագահ ընտրվել Ռութերֆորդ Բ. Հեյսը 1876թ.-ին և Բենջամին Հարիսոնը 1888թ.-ին: Հեյսի դեպքում որոշում կայացնելու համար 1877թ. հատուկ ընտրական


հանձնաժողով ձևավորվեց: 1824թ. ընտրությունների ժամանակ Ջոն Գուինսի Ադամսի օգտին ստացված քվեներն էլ ավելի քիչ էին, քան նրա ընդդիմադիր Էնդրյու Ջեքսոնի քվեները և ընտրությունների ելքը որոշեց Ներկայացուցիչների պալատը, քանի որ Ջեքսոնը չհաղթեց Ընտրական կոլեգիայում:

## ԱՅԼ ՀԱՐՅԵՐ

***Ինչո՞ւ երդման արարողության ժամանակ նախագահը երդվում է ձեռքն Աստվածաշնչին դրած, երբ սահմանադրությամբ պետությունն ու եկեղեցին տարանջատված են***

Երբ նախագահները կամ այլ ֆեդերալ պաշտոնյաներ հանդիսավոր երդում են տալիս, նրանք սովորաբար երդվելիս ձեռքը դնում են Աստվածաշնչի վրա և իրենց երդումը եզրափակում են հետևյալ բառերով. «... և թող Աստված ինձ օգնական լինի»: ԱՄՆ սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետում կարդում ենք. «Ես հանդիսավոր կերպով երդվում (կամ հաստատում) եմ, որ ես անշահախնդրորեն կիրականացնեմ նախագահի պարտականությունները ...»: Ընդ որում, «(կամ հաստատում)» բառերը երդման տեքստում ավելի ուշ են հայտնվել և թույլ են տալիս, որ նախագահներն իրենց պաշտոնը ստանձնելուց կարողանան խուսափել Աստծո առաջ երդում տալուց: Ընտրված ներկայացուցիչները երդում կամ հավաստիացնում են, որ սատարելու են սահմանադրությանը, սակայն երբևէ որևէ կրոնական ստուգում չի պահանջվում՝ որպես պաշտոնը ստանձնելու կամ հասարակության վստահությունը շահելու նախապայման:

***Որո՞նք են հանրապետականների ու դեմոկրատների խորհրդանիշները***



Փիղը ներկայացնում է հանրապետականներին, իսկ ավանակը՝ դեմոկրատներին: Երկու պատկերներն էլ ստեղծել է քաղաքական ծաղրանկարիչ Թոմաս Նասթը 1874թ. Հարփերս Ուիքլի պարբերականի համար: Հանրապետության քվեները ցույց տալու համար նա պատկերել էր ասպատակող մի փիղ, որը հանրապետականները շուտով որդեգրեցին որպես կուսակցության խորհրդանիշ: Ինչ վերաբերում է դեմոկրատներին, Մինեսոտա նահանգի օրենսդիր Իգնատիուս Դոնելին նշել է. «Դեմոկրատական կուսակցությունը նման է ջորու. այն չի հպարտանում իր նախնիներով ու հետնորդներ թողնելու հույսեր չունի»:



*Արհեստակցական միություններն ու այլ կազմակերպություններն արդյո՞ք ասում են մարդկանց, թե ում օգտին քվեարկեն: Ի՞նչ է նշանակում այն, որ միությունը կամ լրագիրը «աստարում են» որևէ թեկնածուի*

Ընտրությունը Միացյալ Նահանգներում ընթանում է գաղտնի քվեարկությամբ և ընտրողն իր կարծիքը գաղտնի է պահում: Նախկինում, մասնավորապես 20-րդ դարի սկզբին և կեսերին արհեստակցական միությունները մեծ քաղաքական ազդեցություն ունեին իրենց անդամների նկատմամբ: Սակայն վիետնամյան պատերազմի ժամանակաշրջանից ի վեր միությունների առաջնորդների ու անդամների տարբեր տեսակետներ ունենալը դարձել է սովորական: Որևէ միության կողմից այս կամ այն թեկնածուին «աստարելը» նշանակում է, որ այդ միությունը պաշտպանում է այդ թեկնածուին և հավանություն է տալիս նրա տեսակետներին: Միությունը կարող է քաջալերել իր անդամներին պաշտպանել այդ թեկնածուին, սակայն պարտադրել, որ քվեարկեն հոգուտ այդ թեկնածուի չի կարող:

